

Т. ТОРАМАНЯНЪ, Одревѣявшихъ формахъ рѣмизинскаго храма. С.-Петербург. 1909.

Խ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻՆ. — [Էջմիածնի տաճարի նստադրոյնի մեկերը: Պետերբուրգ 1909. Ռուսերէն:]

Զուարթնոց եկեղեցու եւ Անուաւերականի միայ այնքան հմտորէն վառարակելուց յետոյ ճարտարապետ Պ. Թորամանեանը լոյս է ընծայում սոյն տետրակը Էջմիածնի տաճարի նախնական ձեւի ու կրած կերպարանափոխութեանց մասին:

Հայրապետական աթոռի աստանդական վիճակը դարերով անուշադրութեան էր մատնել Պայր տաճարը նաեւ յաւհայ պատմագրերի, այնպէս որ Է. դարուց մինչեւ ԺԷ. դար ճիշտ որ «անյայտութեան մառախուղով» է ծածկուած նրա պատմութիւնը:

Բայց ահա յարգելի Հայ ճարտարապետի թափանցող նայւածքը ճեղքում է այդ մառախուղը եւ գիտական եղանակով լուսարանում է այն, ինչ որ ցարդ գաղտնիք էր:

«Գիտնական հետազոտողներն, — ասում է գրքովի հեղինակը, — ԺԷ. դարից մինչեւ մեր օրերը, արտայայտել են զանազան Հայեացքներ տաճարի մասին, ուսումնասիրելով այն որպէս եր հռչակաւոր Հայրապետական աթոռ եւ որպէս քրիստոնէական հնագոյն եկեղեցի: Նրանք, արտայայտելով այս կամ այն, յաճախ տրամագծօրէն հակառակ ենթադրութիւններ՝ բոլորն էլ սակայն համաժողով են մի կէտում, այն է՝ թէ Էջմիածնի տաճարում պահուած է Գ. դարից միայն յատակագծի ձեւը»:

Սակայն Պ. Թորամանեանցն յայտնում է բոլորովին մի նոր ենթադրութիւն, հիմնուած իր գիտնականի վայել լուրջ գիտողութեանց վրայ:

Նրա ասելով՝ Էջմիածնի տաճարն ի սկզբան եղել է քառակուսի եւ ոչ թէ խաչաձեւ, ինչպէս տեսնուինք եւր այժմ եւ ինչպէս ընդունել են ցարդ:

Տաճարի հիւսիսային եւ հարաւային կողմերում փքրիկ զանգակատների տակի դուրս ձգուած մասերը յաւելուած են, կառուցուած Է. դարում՝ Ներսէս Շինողի կողմից:

Մայր Տաճարը Պ. Թորամանեանի ներկայացրած այս ձեւով մեծ նմանութիւն ունի Անուաւերականի եկեղեցուն, որին նախապէս ունեցած ծածկութիւնն ընդհին եւ կարողացել է յարգելի ճարտարապետը իսկոյն նկատել ցարդ բոլորի կողմից աննկատելի մնացածը:

Բայց տաճարի ճարտարապետութեան հետ կապուած ամէն գայտնիք դեռ բոլորովին չէ լուսարանում:

սարանում: Սոյն երկասիրութիւնը արդարեւ «մի բայ» է միայն դէպի առաջ համեմատութեամբ ցարդ տեղի ունեցած ուսումնասիրութեանց:

Որպիտի գիւտ պիտի լինի հայ բանասիրութեան եւ առ հասարակ գիտութեան համար, թէ պարզորէ մի օր եւ այն կարեւոր կէտը, որի մասին ինքը Պ. Թորամանեանն է առաջին անգամ հետաքրքրութիւն զարթեցնում իր զգուշաւոր բայց սրամիտ ենթադրութիւններով, — այն է՝ թէ կային արդեօք տաճարին աղբնիքի բայց նրանից անջատ այլ շէքեր, որոնք յետոյ կցուած լինին մայր տաճարին: Ճշմարիտ որ «Իււ քիլիսէ», անունը, որ թուրքերը Էջմիածնին տալիս են, խիստ նշանակալից է եւ արժէ լրջօրէն աշխատել սոյն կէտի լուսարանութեան համար:

Մօտ ապագայում՝ ձեռնարկուի թերեւս տաճարի հիմնական վերանորոգութեան, որի մասին ժամանակին գրուած է ազգային թերթերում: Ցանկալի է, որ տեղի ունենալիք ճարտարապետական բոլոր գործողութեանց ընթացքում լուրին Պ. Թորամանեանի կարծիքները, որով համարելի գիտնականն աւելի կ'ունենայ մաս մի եւս փարատելու Էջմիածնի անցալի վրայ ծանրացած «անյայտութեան մառախուղը»:

Երանի՜ Պ. Թորամանեանի սոյն համառօտ բայց կարեւոր երկասիրութեան հայրենի ընագիրն եւս լոյս տեսնէր գէթ որ եւ է բանասիրական հանդէսում, որով մատչելի կը դառնար ուսուերէնին անծանօթ ազգայնոց եւս:

Վիեննա, 28 Սեպտ. 1909:

ՄԵՍՐՈՒՊ Վ. ՄԱՍՏՈՒԴԵԱՆՑ

Միքայէլ Մ. Աթոռայ:



ՀԱՅՈՒ ՎՏՈՐ ԶԵՅՈՒՆՅԱՆՈՒՆ. — Գրական ժողովածու՝ Գր. Չախուշեանի խմբագրութեամբ՝ ի նպատակ սովորաւ ԶԵՅՈՒՆՅԱՆԻ. Նոր-Նախըջեան. տպ. Ս. Աւագեանի, 1909, 80 էջ 197: Կիւն. ձ. քր.:

Այս ազգօգուտ հրատարակութեամբս կրկին նպատակ դիտուած է. նախ ներկայացնել ընթերցող հասարակութեան ջերմ հայրենասիրական եւ գիտական հայեացքի ծնունդ հասունածներ, երկրորդ հրատարակութեանէս զոյացած դրամով աջակցական ձեռք մը կարկանդակ դէպի հայութեան մշտնորոգ տառապանքը՝ որ վերջերս աւելի պահանջկոտ դարձաւ յանձին